

ՊՐՈՖ. Ն. Ի. ԳՐԱՇՉԵՆԿՈՎ

ԽՍՀՄ Առողջապահության ժողովրդական Կոմիտարքի  
տեղակալ, ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի ան-  
դամ—Կորրեսպոնդենտ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՑԵՎ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ  
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

ОБЯЗАТЕЛЬСТВА

КОМПЕТЕНТНОСТЬ

ЭКЗЕМПЛЯР

614  
գ-93

Հայկական ԽՍՀ Առօնություն Սան-Լուս-Բաժին

ՅԵՐԵՎԱՆ

1939

20 JUL 2010

ՊՐՈՖ. Ն. Ի. ԳՐԱՇԽԵՆԿՈՎ

ԽՍՀՄ Առողջապահության ժողովրդական Կոմիտասի  
տեղակալ, ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիությի ան-  
դամ — կարքեալպանդինու:

614

q - 93 47.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ  
ՀԱՍԱՐԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Պատ. Խմբագիր՝ Բ. Աստվածատրյան  
Թարգմ. Ավ. Շաքիրյան  
Տեխ. Խմբագիր և սրբ. Վ. Դավիթյան

Գլամիլսի Լիազոր Ե՝ 2346 Պատվեր № 523, Տիրաժ 3000

Հանձնված և արտադրության 21/VII 1939 թ.  
Ստորագրված և տպագրելու 19/IX 1939 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺԿԿ-ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ԽՈՐՃՐԴԱ-  
ՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի ՏՊԱՐՄԱՆ, ՅԵՐԵՎԱՆ

Հայկական ԽՍՀ Առժողկոմատի Սան-Լուս-Բաժին

ՅԵՐԵՎԱՆ, Ա. Ն.

1939

2 MAR 2013

3410

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

Խորհրդային առողջապահության հաջողությունները . . . . .	3
Խորհրդային առողջապահությունն ուժեղ և մասսաների աջակցությամբ . . . . .	6
Խորհրդային բժշկականության սկզբունքային տարրերությունները կապիտալիստական յերկրների բժշկականությունը . . . . .	8
Առողջապահության ակտովի խնդիրները . . . . .	13
Գլխավոր ուշադրությունը մասունքի, մասնկական և կանանց կոնսուլտացիաների ու ճնշումների շինարարությունը . . . . .	15
Մասունքի շինարարությունը — կարևորագույն հարց և Մասունքի աշխատանքի բովանդակությունը . . . . .	16
Մեզ մոտ կան բոլոր պայմանները մասունքի լավ աշխատանքի համար . . . . .	18
Մասնկական կոնսուլտացիաների աշխատանքը . . . . .	20
Պատրոսակ քույրերի խնդիրները . . . . .	21
Յերեխաների բուժողնությունը . . . . .	23
Շննդարձրական ողնություն . . . . .	25
Կանանց կոնսուլտացիաների աշխատանքը . . . . .	27
Պոլիկլինիկաների և դիսպանսերների աշխատանքը . . . . .	28
Տնային ողնությունը . . . . .	30
Առկայանները . . . . .	32
Բժշկական հիմնարկների աշխատանքի ստուխանովյան մեթոդները . . . . .	33
Հիվանդանոցային թերթիկներ տալը պետական կարերություն ունեցող գործ և . . . . .	37
Սանիտարա-պրոֆիլակտիկ աշխատանքը . . . . .	38
Սանիտարական լուսաբորություն . . . . .	39
Բժշկական արդյունաբերություն, Դեղասաներ . . . . .	41
Բժշկական կաղըների պատրաստություն . . . . .	43
Բժշկական գիտությունը . . . . .	44

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ<sup>1)</sup>

Խորհրդային առողջապահությունն անկատած խոչըր հաջողություններ ունի: Մեր յերկրում կառուցված և խորհրդային առողջապահության միանգամայն նոր սիստեմ, վորփի հիմքում դրված և բարձրակողմանի հոգատարությունը աշխատավորների առողջության մասին:

Առողջապահության այդպիսի սիստեմ չգիտէ աշխարհի և վոչ մի յերկիր:

Բժշկական հիմնարկների հսկայական ցանցը գոտեվորում և մեր ամբողջ լայնածավալ յերկիրը: Բացառիկ կարելիքը աշխատանք և աարվում տարբեր հիմքանդաթյունները կանխելու ուղղությամբ: Նոր ստեղծված և մոր ու մանկան առողջության պահպանության հիմնարկների ցանց — մասունքը, ծննդաներ, կանանց և մանկական կոնսուլտացիաներ, կաթնախուժանոցներ և այլն:

Այդ բալորի վրա խորհրդային պետության կողմից հսկայական գումարներ են ծախսվում:

1) Մոսկվայի հասարակական առողջապահական ակտերի ժողովում 1938 թ. հոկտեմբերին տված դեկուցման վերաժակած ազագությունը:



Ստալինյան յերրորդ հնդամյակի պլանով նախատեսվում և «աշխատավորների առողջապահության դռնվագային ոգնության բարելավման, սանիտարական—պրոֆիլակտիկ ձեռնարկումների ընդուժակման, ծննդկաններին ծննդաբերական ողնություն ցույց տալու և մանկական հիվանդանոցների ընդարձակման, աշխատանքի պահպանության բարձրացման և բանվորական հանդստի ու ֆիզկուլտուրայի կազմակերպման զծով կատարվող աշխատանքի զգալի ուժեղացում, առողջապահության պետական ծախսերն ավելացնելով 1937 թվականի 10,8 միլիարդ ռուբլուց մինչև 16,5 միլիարդ ռուբլու՝ 1942 թվականին»: (Ընկեր Վ. Մ. Մոլոտովի ղեկուցման թեղինուներից Համբկ(ր)կ 18-րդ համարումարում):

Հատկացումների այդպիսի թափ առողջապահական գործի համար հնարավոր չե աշխարհի վոչ մէ յերկրում:

Մեր յերկրում տարեց-տարի ավելի ու ավելի յերշնում բնֆեկցիոն հիվանդություններով տառապովուների թիվը:

Այսպես, քութեչով հիվանդացումը 1930 թվից պակասել ե ավելի քան 2 անգամ, դիֆտոքրիացով հիվանդացումը 1913 թվի համեմատությամբ՝ 4 անգամ, բծավար տեֆով հիվանդացումը 1913 թվի համեմատությամբ պակասել ե գրեթե 9 անգամ և այլն: Մեզ մոտ լիսին վերացված են այնպիսի վտանգավոր բնֆեկցիաները, ինչպես խոլերան, ժանդախոտը, բնակոն ծաղկիք:

Ծնունդը մեր յերկրում խիստ բարձրացել ե, իսկ

ընդհանուր մանկական մահացությունը խիստ իջել: Այսպես, Մոսկվայում ընդհանուր մահացությունը պակասել ե համարյա 2 անգամ, մանկական մահացությունը պակասել ե ավելի քան 2 անգամ: Բնական աճը Մոսկվայում նույնպես ավելացել ե ավելի քան 2 անգամ. 1913 թվին 1000 բնակչին 9,1-ից մինչև 20,0 1937 թ., իսկ Լենինգրադում բնական աճն ավելացել ե նույնիսկ ավելի քան 3 անգամ. 1913 թ. 1000 բնակչին 5,3-ից մինչև 18,6 1937 թվին:

Նույն այլ ժամանակամիջոցում մի շարք կապիտալիստական յերկրներում ծնունդը տարեց-տարի պրոպրեսիվ կերպով ընկնում ե, իսկ մահացությունը մեռում ե նույն սահմաններում, կամ նույնիսկ աճում ե: Դրա հետեւվանքով ազգաբնակության բնական աճը կապիտալիստական յերկրներում ընկնում ե:

Խորհրդային առողջապահության այլ բոլոր Հաջողությունները Հոկտեմբերյան Հեղափոխության մեծապույն նվաճումների արդյունքն ե: Այդ բոլորը կատարվեց միայն այն պատճառով, վոր ժողովրդի առողջության պահպանության մասին անգարգում կերպով հոգում են մեր կուսակցությունը, ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինը, անդուր կերպով հոգում ե խորհրդային կառավարությունը, նաև այն պատճառով, վոր կուսակցության ու կառավարության հոգատարությունը աջակցություն ե սուսան աշխատավորական լայն մասսաների կողմից, ակտիվի կողմից, վորը շրջապատում ե առողջապահական մարմիններին:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊՍՀՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԵՂ Ե ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄՐ

Իր դարձացման յուրաքանչյուր պատմական վուլում խորհրդային առողջապահության մարմիններն անփոփոխ կերպով ողբավում են աշխատավոր մասսաների լայն ակտիվի ողնությամբ ու աշխակցությամբ:

Առողջապահության ժողովրդական Կոմիսարիատ ստեղծելու մասին Վ. Ի. Լենինի ստորագրած դեկտրետն արդեն 1918 թվին առաջ բերեց աշխատավոր մասսաների ակտիվության ալիքը, նրանց լայն մասնակցությունը առողջապահության խնդիրներն իրագործելու համար մղվող պայքարում:

1918-1920 թվերին, խորհրդային հանրապետության՝ իր գոյության համար մզած պատմական պայքարի, հակահեղափոխության և ամեն կողմից մեղ ըրջապատող խնտերվենաների դեմ մղած հերոսական պայքարի ըրջանում մենք նկատում ենք աշխատավոր մասսաների, հասարակական ակտիվի լայն մասնակցությունը խորհրդային առողջապահության խնդիրներն իրականացնելու գործում:

Հաղթությունը վոճիլի դեմ պայքարի հակատում, իսկ այն ժամանակ այդ հակատը բացառիկ նշանակություն ուներ, ձեռք բերվեց վոչ միայն բժշկական աշխատողների ջանքերի չնորհկով, վորոնք կանոնած եյին խորհրդային իշխանությանը լիակատար աջակցելու ճանապարհի վրա, այլ և աշխատավորների լայն ողնության չնորհկով, առողջապահական մարմիններին ըրջապատող ակտիվի չնորհկով:

1930-1932 թվերը հանդիսանում են առողջապահական ակտիվի ամենից ավելի մասսայական զարգացման հաջորդ փուլը:

Այդ սոցիալիստական տնտեսություն կառուցելու համար մեր ժողովրդի հերոսական պայքարի տարիներն են, սոցիալիստական բաղադրելու և ամրապնդելու, մեր տնտեսության ինդուստրացման, զյուղատնտեսության կոլեկտիվացում մացնելու տարիները: Այդ տարիներին ևս մենք դարձյալ վկաներ ենք աշխատավոր լայն մասսաների աճող ակտիվությանը առողջապահության ճակատամասում:

Այդ բանը զուգադիմեց ակտիվության ընդհանուր վերելքի հետ մեր յերկրում, այն հերոսական պայքարի հետ, վորը մղում եր մեր կուսակցությունը, մղում եր մեր յերկրի ողբուժարիանը միացած կոլտընտեսային գյուղացիության հետ մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու համար ամուր սոցիալիստական հիմք ստեղծելու նպատակով:

Ժողովրդի թշնամիները, տրոցկիստական-բուխարինական տականքները, վորոնք մուտք եյին գործել առողջապահական մարմինների մեջ, հետաղ տարիներում փորձում եյին քայքայել այդ նվաճումները: Նրանք ամեն տեսակ խոչընդոտներ եյին հարուցում աշխատավորների լայն ակտիվությունը առողջապահական մարմինների չուրջը ծավալելու դեմ, քայքայում եյին հասարակական կաղմակերպությունները, քայքայում սանիտարա-լուսավորական աշխատանքը, վորի ողնությամբ աշխատավոր լայն մասսաները

կազմակերպվում ելին առողջապահական մարմինների  
չուրջը:

Բայց թշնամիների այդ բոլոր մեքենայություն-  
ները ժամանակին բացվեցին, թշնամիները ջախջախ-  
ված են և այն արգելվները, վոր նրանք դնում ելին  
մեր առաջ, մաքրված են մեր ճանապարհից:

Մենք այժմ ապրում ենք նոր ետապ, յերբ ա-  
ռողջապահական մարմինների չուրջը նորից աշխատա-  
վորների լայն ակտիվ և ստեղծվում, յերբ մասսա-  
յական աշխատանքի հարցերը նորից որակարգի մեջ  
են դրվում: Դրան վորպես վկայություն հանդիսա-  
նում և առողջապահական ակտիվի ստեղծումը  
Մոսկվա քաղաքում, մեր պրոլետարական կարմիր  
մայրաքաղաքում:

Կասկածից դուրս ե, վոր դա առողջապահական  
մարմինների չուրջը հասարակայնություն ստեղծելու  
առաջին քայլերն են միայն, քանի վոր լայն ակտիվի  
սովորթյամբ և միայն, վոր մենք ի վիճակի յենք  
առաջ շարժել առողջապահությունը, արագ կերպով  
վերացնել թերությունները մեր աշխատանքում և ող-  
տակար գործ կատարել մեր ժողովրդի համար, մեր  
սոցիալիստական հայրենիքի համար:

ԽՈՐՃՐԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ  
ՏՄՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵԿՌՆԵ-  
ՐԻ ԲԺՇԿԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Վորո՞նք են մեր խորհրդային բժշկականության  
ոկրունքային տարերությունները կապիտալիստա-  
կան յերկրների բժշկականությունից, խորհրդային

բժշկականության, վորը կռել ե մեր կուսակցու-  
թյունն ու կառավարությունը, վորն աձել ե աշխա-  
տավոր լայն մասսաների ողնությամբ:

Այնպիսի յերեվույթ, ինչպես առողջապահության  
լայն ակտիվ ստեղծելը, հնարավոր չե ուրիշ վոչ մի  
յերկրում, բացի մեր սոցիալիստական հայրենիքից:  
Տնտեսության կապիտալիստական սիստեմը բժշկակա-  
նությունը պայմանավորում է, վորպես մասնավոր-  
ունական, մասնավոր կապիտալիստական ձեռ-  
նարկություն: Ամբողջ բուժական գործը յուրաքանչ-  
յաւը կապիտալիստական յերկրում, այդ թվում,  
այսպես կոչված, «գեմոկրատական» յերկրներում  
(ինչպես որինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգնե-  
րը) հանդիսանում և մասնավոր ձեռնարկուական  
գործ, առ ու ծախի գործ: Կապիտալիստական պե-  
տություններում կապիտալիստներն ամենից քիչ հո-  
ղում են աշխատավորների առողջության մասին,  
նախազգուշական ձեռնարկումների մասին և այն մա-  
սին, վորպեսզի կազմակերպեն բժշկականության  
պետական սիստեմ, պետական առողջապահություն:

Առողջապահության սիստեմը կապիտալիստական  
յերկրներում գայություն ունի միայն այն չափով,  
ինչ չափով նա անհրաժեշտ է նվազագույն սանիտա-  
րական կարգ պահպանելու համար, վորովհետեւ  
այդ բանը կապված է հենց իրեն՝ բուրժուազիայի  
կենսական չահերի հետ:

Ենքնալսն իր մի շարք աշխատություններում  
ցույց տվեց բուրժուական յերկրների սանիտարական  
որենսդրության ունեցած այդ կախումը կապիտալիս-

սական պետության շահերից : Մարքսը մի քանի  
անգամ և վերադառնել և այդ հարցին և իր հանձարեղ  
աշխատություն «Կապիտալ»-ի ծանոթության մեջ  
նշում ե , վոր անդիմական որենսդրության ամբողջ  
սիստեմը , անդիմական պարլամենտի կողմից հաս-  
տատված բոլոր որենքները ընդունված են յեղել  
բացառապես բուրժուազիայի շահերի համար , վորին  
սպառնում եր անդիմական քաղաքների հակասանիտա-  
րական դրությունը 19-րդ դարի յերկրորդ կեսին :

Այսուամենայնիվ բժշկական գործը վոչ մի յերկ-  
րում , այդ թվում նաև Ամերիկայում , չի կազմում  
ակտության հոգատարության առարկան : Նա կտա-  
լով և տրված բուրժուական զործարարներին , վորոնք  
կազմակերպում են ամեն տեսակի բուժական կոմի-  
նատներ , կառուցում մասնավոր հիվանդանոցներ ,  
առողկինիկաներ , ձգում են վորքան կարելի յե ա-  
վելի շատ ողուած քաղեն իրենց «պացիենտներից» :  
Այդ զործարարներին ամենից քիչ և ճետաքրքրում  
աշխատավորների առողջության , իսկական բուժ-  
ուություն ցույց տալու հարցերը : Երանց ճետա-  
քրքրում և միայն քսակը , ողուած , շահույթը ,  
վաստակը , ինչպես ամեն մի առելուրական զործում :  
Կապիտալիստական յերկրներում բժշկականությունը  
դիտվում է ինչպես առարկա , վորը ձեռնատու յի  
կապիտալիստական բուրժուական շուկայի համար :

Հասկանալի յե , վոր կապիտալիստական յերկը-  
ներում ամենից քիչ կարելի յե պատահել հասարա-  
կայնության , վորը ըրջապատեր իր յերկը բուժա-  
կան ու սանիտարական հիմնարկները : Յեթե մենք

հանդիպում ել Ենք «Հասարակայնության» տարբերի  
հետ , ասկա դա զնում ե , ոլխավորապես , «բարեղոր-  
ծության» ուղղությամբ , վորի արժեքը բավականա-  
չաղի լավ լուսարանված և Ենդելսի կողմից նրա  
«Բանվոր դասակարգի զրությունը Անդիմայում» դրվե-  
մեջ , Մանչեստերի (Անդիմայի խոշորագույն տեքստիլ  
կենտրոններից մեկի) հիվանդանոցի որինակով :  
Ենդելսը ցույց տվեց , թե բուրժուական հասարակու-  
թյան տիկինները ինչպես եյին «բարեկործություն»  
ցույց տալիս տեքստիլ ձեռնարկություններում զբաղ-  
ված բանվորներին և յերեմն նրանց ընտանիքների  
անդամներին : Երանք վողորմություն եյին տավա-  
Մանչեստերի հիվանդանոցի պահպանման համար ,  
վորը քաշ եր տալիս իր խղճուկ գոյությունը և հենց  
այժմ ել զանգում և ծանր տնտեսական դրության  
մեջ , գոյություն ունենալով միայն բուրժուական  
տիկինների «բարեկործության» ոգնությամբ ու կա-  
պիտալիստների տված վողորմությամբ :

Ահա և առողջապահության մարմինների շուրջն  
յեղած ամբողջ «Հասարակայնությունը» , վորի արժե-  
քը շատ լավ հայտնի յե մեղ և վորի կապիտալիս-  
տական եյությունը վոչ մի կասկած չի թողնում  
մեղանից յուրաքանչյուրի համար :

Ինքնին հասկանալի յե , վոր մեր լայն ակտիվը  
վոչ մի կերպ չի կարող համեմատվել բուրժուական  
«բարեկործության» հետ :

Մեր յերկրում այլ և հասարակայնություն կա-  
ռուցելու սիստեմը : Յեկ միայն սոցիալիստական եկո-  
նոմիկան և խորհրդային սիստեմը կարող են հնարա-

վորություն տալ ստեղծելու իսկական լայն ակտիվ  
առողջապահության մարմինների չուրջը, ստեղծելու  
իսկական պետական բժշկականություն:

Բնականորեն, մենք չենք կարող բուրժուական  
պետություններում գտնել նաև վոչ մի, թեկուզ և  
մոտավոր համանմանություն առողջության պահպա-  
նության ձևնարկումների այն պետական սխատեմի  
հետ, վորը մենք ունենք մեզ մոտ: Ֆաշիստական  
յերկրներում բժշկականությունն ուղտադործվում է,  
զիսավորապես, նրա համար, վորպեսզի աղացուցեն  
ամեն տեսակի խավարամուական ցեղական «տեսու-  
թյուններ», կամ ել ավելի շատ շահագործեն ձեռ-  
նարկություններում զբաղված բանվոր զասակարգին:  
Այսեղ ամենից քիչ աշխատավոր մասսաների շահերի  
մասին են մտածում: Այսեղ մտածում են այն մա-  
սին, վորպեսզի ամեն տեսակի կեզծ—զիստական  
«բժշկականության» ողնությամբ կարելի լինի արդա-  
րացնել ցեղականության «տեսությունը» կամ ստերժ-  
ման (ստերիլիզացիայի) «տեսությունը»:

Կարելի յե բերել Փաշիստական դիտնական  
բժիշկների «իմաստության» բաղմաթիվ որինակներ,  
բժիշկներ, վորոնք մոռացել են և այն, ինչ սախորել  
են նրանք, մոռացել են այն հումանիտար գաղափար-  
ները, վորոնք մի ժամանակ հայտարարվում եյին  
զերմանական համալսարմների ամբիոններից: Այդ  
զիստականներից շատերն ամեն տեսակի գաղանային  
«տեսություններ» են քարողում: Ֆաշիստական մո-  
լիուանդ մի հայտնի «զիստական» հայտարարեց,  
վոր իրենց հարկավոր չեն ծննդատներ, վոր ծննդա-

բնական ոգնության համար արված ծախսերը, փո-  
ղի միանգամայն ավելիորդ վատանում և, վորովհետեւ  
դեմքանական ցեղականության տեսակետից ավելի  
լավ և ծնել տանը, ընտանիքում: Մի ուրիշ մոլե-  
ստանդ՝ մանկական «բժիշկ» Դեսսաուն քարոզում և,  
վոր մանկական լինֆելցիոն հիվանդությունները հան-  
գիսանում են կյանքին ավելի հարմարվածների  
«ընտրության բնական կարգավորիչը»: Մի մոլեստանդ  
ևս վշտանում եր նրա համար, վոր նախազդուչական  
սանիտարական միջոցառումների կերպովող սիստեմը  
հնարավորություն չի տալիս ինֆեկցիաներին ախտա-  
հարելու ավելի պակաս հարմարվածներին: Այդ  
«զիստականի» միակ հույսը մնացել և քաղցկեղը,  
վորն իրը կողնի այդ բնական ընտրությանը, ախտա-  
հարելով ամենից ավելի պակաս հարմարվածներին:

Այդ մոոելանդական «տեսությունները» բավա-  
կանին ակնառու կերպով ցույց են տալիս, թե Փա-  
շիստներն ինչ նպատակների համար են ողտագործում  
բժշկական պրակտիկան: Ամենից ավելի քիչ կարելի  
յե մտածել, վոր Փաշիստական յերկրներում հնարա-  
վոր և աշխատավոր մասսաների վորեն շարժում  
պրակտիկ բժշկականության չուրջը, բժշկական հիմ-  
նարկների չուրջը:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Եեր սոցիալիստական ցինարարության տվյալ  
մուլում մենք բացառիկ նշանակություն ենք տալիս  
լայն ակտիվի նոր ծավալմանը առողջապահության  
մարմինների չուրջը:

ՄԵՆՔ ապլում Ենք մեր սոցիալիստական պետությունն ստեղծելու այնպիսի շրջան, յերբ լայն մասսաների ակտիվությունը հանդիսանում է մեր վող պետական աշխատանքի անբաժանելի մասը։ Այդ ակտիվության, կուլտուրականության աճի ցուցանիշը հանդիսանում է ԽՍՀՄ և միութենական հանրապետությունները Գերազույն Խորհուրդներում։ Այդ ընտրությունները ցույց տվին մեր ժողովրդի միանականությունը, համախմբվածությունը կուսակցության, ընկեր Ստալինի շուրջը, մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի շուրջը, Խորհրդային կառավարության շուրջը։

Մեր ժողովուրդը վոչ միայն ընտրում է իր ղեկատատներին, վորոնց վստահում և նաև վորոնց հետ և կանչում նաև, յեթե այդ դեպուտատները չեն արդարացնում նրա վստահությունը, այլ և ինքը՝ ժողովուրդն ակտիվ կերպով մասնակցում է պետական կառավարման գործին։ Դրանումն է մեր սոցիալիստական պետության տարրերությունը կապիտալիստական սիստեմից՝ մեր պետության աձման ու ամրապնդման չափով ժողովուրդն ավելի ու ավելի յեն մասնակցում նրա կառավարմանը։

Ահա թե ինչու մեզ մոտ, սոցիալիզմի յերկրում պետական ապարատը և ժողովրդական մասսաները՝ իսկական միանական ամբողջություն են կազմում և չեն հակադրված մեկը մյուսին։ ՄԵՆՔ ունենք այնպիսի սիստեմ, վորի ժամանակ ժողովրդական մասսաներից լավագույն մարդիկ առաջ են քաշվում ապարատի մեջ։ Դուք կարող եք դպրոցից, հիմանդա-

նոցից, լարորատորիայից և այլն առաջ քաշել մարդկանց պետական մեծ աշխատանքի։ Յեվ ընդհակականությունը, պետական ապարատից մարդիկ նորից վերադառնում են ստորին աշխատանքի։

Ի՞նքնին հասկանալի յէ, վոր առողջապահության ամբողջ սիստեմը՝ վորակյալ բուժողություն ցույց տալը, աշխատավորների առողջության պահպանությունը, մեր բնակավայրերի, քաղաքների, արդյունաբերական ձեռնարկությունների սանհիտարական գրությունը՝ այս բոլորը սոցիալիստական տնտեսության այնպիսի բաժիններ են, վորոնցում անմիջականորեն շահագրգռված են յուրաքանչյուր աշխատավոր։ Աս մի շահ է, վորը բղխում է սոցիալիստական շինարարության հաջողություններից և ստիպում առողջապահական մարմիններին մշտապես լինել մասսաների վերահսկողության տակ, իսկ մասսաներին՝ անգույն կերպով հետաքրքրվել, թե ինչպես են աշխատում առողջապահական մարմինները, բժշկական աշխատողները և ինչ չափով են նրանք արդարացնում այն հույսերն ու պահանջները, վորապեսիք առաջադրվում են աշխատավորական, լայն մասսաների կողմից։

ԳԼԽԱՎՈՐ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՍՈՒՐՆԵՐԻ, ՄԱՆԿԱԿԱՆ ՅԵՎ ԿԱՆԱՆՑ ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱՆԵՐԻ ՈՒ ԾՆԴԱՇՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Վո՞ր հիմնական ողակներով կարելի յէ ամենից ավելի նպատակահարմարութեն ողատարծել առողջապահական մարմիններին կից ակտիվ կազմող մասսաների հախաձեռնությունն ու յեռանդը։

Ամենից լավ և վո՞ր կողմն ուղղել մասսաների  
ակտիվությունը առողջապահական մարմինների աշ-  
խատանքը բարելավելու համար:

Ամենաառաջին և հմտական հարցը, վորն այժմ  
դրակեցնում և աշխատավորական լայն մասսաներին,  
հանդիսանում և մասարարությունը, ման-  
կական և կանաչ կանութացիաների աշխատանքը,  
ծննդարեական ողնության դժով մեր կողմից ցույց  
արվող ողնության դրությունը, մեր ծննդատների  
դրությունը:

Ձեռնարկումների այս կոմպլեքսի վրա ակտիվը  
պետք և կենտրոնացնի եր հատուկ ուշադրությունը:  
Բժշկական աշխատազներն այստեղ պետք և սոսանան  
ասողջապահության ակտիվի դորձուն աջակցու-  
թյունն ու ողնությունը:

## ՄՍՈՒՐՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ— ԿԱՐԵՎՈ- ՐԱԳՈՒՅՑՆ ՀԱՐՑ Ե

Ինչու համար մենք այդպիսի մեծ նշանակու-  
թյուն ենք տալիս մասունքների, ծննդատների, կանանց  
և մանկական կոնսուլտացիաների հարցին:

Անպայմանորեն, առողջապահության աշխատանքի  
այդ բաժինը բացառիկ անտեսական և հումանիտար  
նշանակություն ունի: Կանանց և մանկական կոնսուլ-  
տացիաների, մասունքների ցանցի ստեղծումն ազատա-  
գրում և կնոջը: Նա կարող և ավելի լիրիկ յերեվան  
բերել իրեն արտադրության մեջ, կարող և ժամա-  
նակն ոգտագործել իր կուլտուրական աճի համար,  
մասնակցել մեր սոցիալիստական շինարարության բո-

լոր ընտակավանելում: Ահա թե ինչու այդ հարցն ու-  
նի վոչ միայն մեծադրույն հումանիտար, այլև տնտե-  
սական նշանակություն, վորովհետեւ նրա լուծումից  
և կախումած, թե քանի կին կզբավենք մենք արտա-  
գրության մեջ, թե ինչպես մենք ի վիճակի կլինինք  
պահել նրանց արտադրությունում:

Այս կարեվորագույն հարցում մենք առանձնա-  
պես ենք ապասում ակտիվի ողնությանը:

Տրոցկիստական՝ բուխարինական տականքը, վորը  
մուլք եր զործել առողջապահական մարմինների  
մեջ, վնասում եր առողջապահական զործի տարբեր  
ուղիներով, բայց նրանց կողմից հատուկ վնաս եր  
հացցրած առողջադահության այդ բաժնին:

Վնասարարները խփում եյին առողջապահության  
այդ շատ սուր տեղամասին, ձկուում եյին այն ռա-  
նին, վորպեսզի վորքան կարելի յեւ ավելի քիչ մուր  
կառուցեն, այդ շինարարությունը, վորքան կարելի  
յեւ, ավելի՛ թանգ նստեցնեն: Նրանք կազմում եյին  
շինարարության շատ բարդ, թանգ նստող նախա-  
դեկը, վորոնց կատարման համար հարկավոր եր շատ  
փող և ուժերի մեծ լրացում, հարկավոր եր ծախսել  
մեծ քանակությամբ գեֆիցիոտային նյութեր:

Այդ բոլորը հասցնում եր այն բանին, վոր  
մսուրներ ավելի քիչ եյին կառուցում և շատ ավելի՛  
թանգ եյին նստում:

Վնասարարներին հաջողվեց այդ մանյովը և  
մենք դիտենք, վոր 1936-1937 թվականների նախա-  
դեկով մսուրները շատ թանգ եյին նստում և շատ  
յերկար ժամանակ կառուցվում:

ԽՍՀՄ ժողովրդական կոմսարների Խորհուրդը, առաջին հերթին լնկ. Մոլոտովը շատ կտրուկ կերպով շտկեց ԽՍՀՄ Առժողկոմատն աշն իմաստով, վորագեսղի մուլքների նախագծերը իսխտ պարզեցված լինեն, իսկ չինարարությունը խիստ ճժանացած: Շինարարության եժանացման հաշվին մենք հնարավորություն ունենք յերկու անդամ մեծացնելու շինարարությունը ունենք յերկու անդամ մեծացնելու տեղերի թիվը մոտը այլին չիմնարկներում:

ՄՍՈՒՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մյուս շատ կարելու հարցը— ինչո՞ւ իրենց՝ մուլքների աշխատանիքի բալանժակարգությունն է: Բանք այն է, վոր առողջապահական մարմինները դեռևս շատ վատ են ողտագործում մուլքների նույնիսկ դործող ցանցը: Մենք չենք ոգտագործում այդ մուլքների լրիվ կարողությունը: Մեզ մոտ համարյա բացակայում և մուլքների աշխատանիքի յերկիերքափոխությունը, յեթե նա լավ է կարգավորված, հնարավորություն կտա մուլքների գոյություն ունեցող քանակի պայմաններում մեծացնել սպասարկվող յերեխաների թիվը: 1936-1937 թվականների նախագծերով կառուցված մուլքներում գիտավորյալ կերպով բարձրացրած և սպասարկման շնչերի անհամար թիվը, վորոնցից շատերը չեն ոգտագործվում: Այդ պատճառով մի շաբաթ մուլքներում հնարավոր և լրացուցիչ մահճակալների ծավալումը մուլքներում գոյություն ունեցող մի ամբողջ շաբաթ սենյակների ճիշտ ողտագործման հաշվին:

Ամենանվազագույն հաշվումներով՝ մեզ հաջողվեց ցույց տալ, վոր գոյություն ունեցող մսուրներում կարելի յե 100 հազարից ավելի տեղ ստանալ միայն մսուրները ուսցիոնալ ողտագործելու և մսուրներում յերկից երթափոխությունը ճիշտ կարգավորելու հաշվին, իսկ յեթե զրա հասնենք նոր մսուրների ավելի արագ չինարարության, ի վերջո, կարող ենք ստանալ մսուրային հիմնարկների մի վերթիսարի ցանց: 1938 թվին առողջապահության մարմինները՝ 100 հազար մսուրային տեղ կառուցելու պլանային առաջադրանք ունեցին կառավարությունից: Այդ առաջադրանքը դժբախտաբար չի կառարված:

Առ մեկը հոկտեմբերի 1938 թ. (9 ամսվա ընթացքում) մենք պլանով նշանած 100 հազարից գործի գցեցինք 33 հազար մսուրային մահճակալ: 1938 թվի ընթացքում յենթաղլում եր գործի գցել ևս 20 հազար մահճակալ: Այսպիսով, 1938 թվի վերջին սուպերմածանը է 53 հազար մսուրային մահճակալ, այսինքն, կառավարության առաջադրանքը կատարված և միայն կիսով, իսկ մսուրների զդալի թիվը մնացել է, այսպես կոչված «փոխանցիկ չինարարություն» 1939 թվի համար:

Դրան պետք է ավելացնել այն, վոր Մոսկվայում ևս, վորտեղ 1938 թ. պլանով պետք է կառուցվելը 10 հազար մսուրային տեղ, վոչ մի մսուր (1938 թ. պլանից) չափարավեց չինարարությունն ուշ սկսելու հետեւ վանքով և այդ ամբողջ չինարարությունն առցագվ 1939 թվականին:

ՄԵԶ ՄՈՏ ԿԱՆ ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՄՄՈՒՐ-  
ՆԵՐԻ ԼԱՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Տեղերում մասւրային հիմնարկների շինարարու-  
թյունն իրագործող առողջապահական մարմինների և  
կազմակերպությունների վատ աշխատանքը զդալի  
չափով կարող եր ուղղվել ակտիվի լավ աշխատան-  
քով։ Շատ մասւրներ, ծննդատներ՝ կարող ելին կա-  
ռուցվել և զործի զցվել ահճամեմատ չատ ակելի  
չատ, յեթե նրանց շուրջը ծավալված լիներ լայն  
կամպանիա, մորիլիպացիայի յենթարկված լիներ կու-  
ռակցական, ոլրովմիւթենական և խորհրդային հա-  
սարակայնությունը։

Այս զործում ակտիվի յեռանը դործադրելու  
մեղ կա։ Կա թե ինչի վրա աշխատի ակտիվը մեր  
մասւրների հենց աշխատանքի բովանդակությունը բա-  
րելավելու տեսակետից։ Մեր վոչ բոլոր մասւրներն  
են լավ աշխատում։ Մեր մի քանի մասւրների վատ  
աշխատանքը կախված է կալբերից, նրանց սպասար-  
կող մարդկանցից, քանի վոր մեղ մոտ կան բոլոր  
պայմանները մասւրների ավելի լավ աշխատանքի հա-  
մար։

Փորձը ցույց է տալիս, վոր հենց միենույն համ-  
կացումներով, համարյա միենույն շրջանում յերկու  
միատեսակ տիպի մասւրներ տարբեր ձեզով են աշ-  
խատում։ Մեկը տալիս է աշխատանքի բարձր վորակ,  
իսկ յուսը, միենույն պայմաններում, աշխատանքի  
շածք ցուցանիշներ։ Որինակ, Մոսկվա քաղաքի Սո-  
կոլնիկյան շրջանում Կարտամիչեկի անվան դործարա-  
նին կից № 74 մասւրը։ Այդ մասւրում զգալի հիվան-

դացում է նկատվում յերեխաների մեջ։ Յերեխանե-  
րից շատերը վատ տեսք ունեն, դաստիարակչական  
աշխատանքն այս մասւրում անբավարար է զրված։

Միանդամայն այլ պատկեր և տալիս Մոսկվա  
քաղաքի Լենինգրադի շրջանում Յերժակովի անվան  
գործարանին կից նույն տիպի մասւրը։ Մասւր ընդու-  
նելու ժամանակ յերեխաների չատ ուշադիր ընտրու-  
թյան չնորհիվ, լավ ինամքի, յերեխաներին ուսում-  
նասիրելու և ճանաչելու չնորհիվ, նրանց մեջ համար-  
յա հիմնադրացություն չկա։ Այդ մասւրում մենք ու-  
նենք լավ զրված տնտեսություն, մասւրային տիպերի  
100 տոկոսային ողտադրում, լավ զրված դաստիա-  
րակչական աշխատանք և այլն։

Այս յերկու որինակները ցույց են տալիս, վոր  
միայն մարդկանցից և կախված մասւրների լավ կամ  
վատ աշխատանքը։

Ակտիվի զործումնեյությունը, կրկնում եմ, կա-  
րող է չափաղանց ողտակար լինել մասւրային աշխա-  
տանքը բարեկավելու համար։ Այսուղ չկա վոչ մի  
հարց, վորն անլաւծելի կամ գեգար լուծելի լինի։  
Բժշկական անձնակազմի աշխատանքը բարեկավելու  
համար, այլ աշխատանքը պետք է զնել ինքնազնա-  
դատության կրակի տակ։ Բարեկավել հիմնարկի  
անտեսական աշխատանքը՝ նշանակում է թափ տալ  
մարդկանց, վորպեսզի նրանք ամելի մեծ ակտիվու-  
թյամբ զրադիկն մասւրների տնտեսությամբ։

ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՂՍՈՒԼԱՑԱՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ի՞նչ դրության մեջ է մանկական կողսուլտացիա-  
ների զործը։

Մանկական հիվանդացումների և մահացումների  
դեմ մղվող պայքարում կոնսուլտացիաները բացառիկ  
կարելոր նշանակություն ունեն: Մոսկվայում քիչ  
չեն այդպիսի կոնսուլտացիաները: 1937 թ. վերջին  
մենք ունեինք 62 կոնսուլտացիա և կոնսուլտացիանե-  
րի 17 Փիլիալ: 1938 թվականին բացուցիչ կերպով  
պետք է ծալվալիւյին մի քանի կոնսուլտացիաներ:  
Սակայն այդ կոնսուլտացիաների աճը չի հասնում  
այն յերեխաների թվի աճին, վորոնք պետք է սպա-  
սարկվեն այդ կոնսուլտացիաների կողմից, չի հաս-  
նում հաճախումների թվին: 1936 թվականին Մոսկ-  
վայի մանկական կոնսուլտացիաների հաճախումները  
կազմում ենին 1.895 հազար, իսկ 1937 թվականին  
մոտ 2.500 հազար:

1938 թվականին այդ քանակությունը, հավանու-  
թեն, հասավ ել ավելի մեծ թվի, չնորհիվ ծննդարե-  
րության մեծ աճի, մանկական բնակչության մեծ  
աճման: Իսկ յեթե հաճախումների թիվը և սպա-  
սարկվող յերեխաների թվի աճը համեմատենք կոն-  
սուլտացիաների աճի հետ, ապա մենք կտեսնենք,  
վոր կոնսուլտացիաների աճը հետ և մնում պահանջ-  
ներից:

Միթե այդպես գժվարին, անլուծելի գործ և այդ  
կոնսուլտացիաների կազմակերպումը: Մի՞թե, նույն-  
իսկ անկախ հատուկ չենքի կառուցումից, չի կարելի  
չենքեր գտնել ու հարմարեցնել նրանց կոնսուլտա-  
ցիաների համար: Ինչո՞ւ, որինակ, Գորկու փողոցի  
վրա, վորտեղ չենքերի այնպիսի գարմանալի աճֆի-

լագա յե կառուցված, կոնսուլտացիա չի կազմակերպ-  
ված յերեխաների համար:

Պարզ է, հարկավոր է այդ մասին հարց հարու-  
ցել տեղական խորհրդային ու կուսակցական կազմա-  
կերպությունների առաջ, յեռանոլագին հասնել նրանց  
լուծմանը: Այդ հարցերը միայն առողջապահության  
աշխատողների կողմից գնելու դեպքում, գործը վոչ  
միշտ և հաջողությամբ պատկվում, իսկ ակտիվի ող-  
նությամբ, վորպես կանոն, կարելի յե հասնել շտա-  
հարցերի բավարար լուծմանը:

#### ՊԱՏՐՈՆԱԺ ՔՈՒՅԹԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոնսուլտացիաներն իրենց լավ աշխատանքով կա-  
րող են շատ բան անել մանկական հիվանդացությունը  
և մանկական մահացությունն իջեցնելու համար: Մենք  
ձգտում ենք այն բանին, վորպեսզի կոնսուլտացիա-  
ներն ունենան բավական թվով պատրոնաժ գույքեր,  
վորովհետու մեր խնդիրը կայանում է վոչ միայն  
նրանում, վորպեսզի մենք սպասարկելինք մայրերին,  
յերբ նրանք են գալիս կոնսուլտացիա յերեխայի հետ,  
այլ և մայրերին այցելել տանը, նրանց կոնսուլտա-  
ցիա հրավիրել այն ժամանակ, յերբ պատրոնաժ գույ-  
քերը տնային այցելության պայմաններում չեն կա-  
րողանում ամբողջ ոգնությունը ցույց տալ մայրերին:  
Իբրև կոնսուլտացիաները, այդ պատրոնաժ գույքերի  
աշխատանքի չորսհիմ կարող են բեռնաթափել չափեց  
ավելի հաճախումներից:

Այդ պատճառով մենք խնդիր ենք դնում 7-8  
ամսյա դասընթացների միջոցով պատրաստել պատ-

բոնաժ քույրերի հաստիք, վորոնք կարողանան անային պայմաններում սիստեմատիկ կերպով այցելել մորն ու մանկանը, հրահանգեն մայրերին, թե ինչպես ճիշտ խնամել յերեխային:

Սիստեմատիկ կերպով հաճախելու դեպքում քույր կարող ե յերեան բերել հիվանդացած յերեխաներին վորպեսզի հիվանդության ամենավաղ շրջանում կարելի լինի բժշկական ողնություն ցույց տալ: Իսկ մենք գիտենք, վորքան չուտ և սկսված բուժումը, այնքան ավելի հաջող ե նա: Պատրոնաժ քույրերի աշխատանքի արդպիսի կազմակերպումը մանկական էռնուուլտացիաներում բացառիկ նշանակություն ունի:

Ակտիվը կարող ե ողնել առողջապահական մարմիններին չառ չուտ լուծելու այդ խորիքը— պատրաստել այլպիսի պատրոնաժ քույրեր: Պատրոնաժ քույրերի կազմի մեջ առաջ քաշել ակտիվ կանանց, ցույց տալ նրանց աշխատանքի լավագույն որինակներ: Այդ բանը հսկայական նշանակություն կունենա նրա համար, վորպեսզի մեր կոնսուլտացիաները չիերածվեն վատ պոլիկլինիկաների, այլ լինեն իսկական պրոֆիլակտիկ հիմնարկներ, լայն սանիտարա-լաւագործական աշխատանքի տեղեր, վորտեղ մայրերը կարողանան սովորել, թե ինչպես խնամել յերեխաներին, ինչպես դաստիարակել նրանց: Այդ բանը հարկավոր ե նաև նրա համար, վորպեսզի կոնսուլտացիաները բեռնաթափվեն ավելորդ հաճախումներից, հաճախումները տուն տեղափոխելու հաջողին: Այդ աշխատանքը վեր չե առողջապահական մարմին-

ների ուժերից, մանականդ լայն ակտիվի մասնակցությամբ:

### ՅԵՐԵԽԱՆԸՆԸՐԻ ԲՈՒԺՈՒԳՆՈՒԹՅԱՑՈՒՆԸ

Ինքնին հասկանալի յե, վոր դորձը միայն նրան չի հանդում, վորպեսզի մենք կազմակերպինք մանկական կոնսուլտացիաներ և բավականաչափ թվով մուուրներ: Այդ քիչ ե: Մենք պետք ե մտածենք այն մասին, թե ինչպես սպասարկել յերեխաներին նրանց հիվանդանալու դեպքում: Իսկ այսուղ հարկավոր և ուզգակի ասել, վոր յերեխաներին բուժունություն ցույց տալու վործը, մանականդ վաղահասակներին, նույնիսկ Մոսկվայում, մերավարար դրության մեջ ե:

Ինքնուրույն մանկական սպալիկլինիկաների թիվը չառ անհան ե: Մանկական տեղերի թիվն ընդհանուր հիվանդանոցներում և ինքնուրույն մանկական հիվանդանոցների թիվն անբավարար ե: Մենք վոչ միշտ ենք ի վիճակի ժամանակին հոսպիտալիզացիայի յենթարկելու նույնիսկ ինֆեկցիոն հիվանդությունը հիվանդ յերեխային: Իսկ վոչինֆեկցիոն հիվանդությամբ հիվանդների հոսպիտալիզացումը ավելի վատթար դրության մեջ ե, քանի վոր չափարանց քիչ են մանկական մահճակաբները:

Իսկ ի՞նչպես ե՛ղնում մեղ մոտ մանկական հիվանդանոցային կորպուլների շինարարությունը, վորտեղ մենք կարողանայինք հիվանդացած յերեխաներին վորպեսզի հիվանդանոցային ողնություն ցույց տալ: Ի ամոթ Մոսկվայի խորհրդի պետք ե ասել, վոր այդ շինարարությունը չառ վատ ե գնում: Մի չարք կոր-

պուսների շինարարությունն սկսված է գեռ ևս 1936 թ., յերկու կորպուս Տօկոլինա գորառում, յերկու կորպուս Բոտկինյան հիմանդանոցին կից: Թեև այդ կորպուսները պետք է գործի գցվելին 1937 թվին, սակայն նրանց պատրաստ լինելու տոկոսն այժմ ել դեռ աննշան է: Կառուցվելու յե ընդամենը 10 կորպուս:

Մեղ խոստացել են մինչև 1938 թ. վերջը կառուցել միայն 2 կորպուս: Մի՞թե վոչինչ չի կարելի անել նրա համար, վորապես արագացվի այդ կորպուսների շինարարությունը: Մենք տեսնում ենք, վոր քաղաքի գանձան մասներում, մի քանի ամսվա ընթացքում կառուցվում են հրաշալի տներ, վորոնցով մենք կարող ենք հղարտանալ: Իսկ ինչո՞ւ Մոսկվայի խորհուրդը և նրա տրեստը, վորը կառուցում է այդ տները, չեն կարող նույնանման յեռանդ գործարել մանկական հիմանդանոցային կորպուսներ շինելու գործում: Անկասկած կարող են, բայց զրա համար հարկավոր ե ուժեղ ձեռք, վորապես հրի շինարարական կաղմակերպություններին և Մոսկվայի խորհրդի կաղմակերպություններին այդ խորհրդները կատարելու համար:

Առողջապահական մարմինները և Մոսկվայի խորհրդի մարմինները մեր ակտիվիլ ունության կարիք ունեն: Յեթե ակտիվը յեռանդում կերպով հրի մեղ, ապա մենք ավելի արագ կշարժվենք առաջ և ավելի քայլու ավելի ճիշտ կլուծենք առողջապահության կարգման խորհրդները:

### ԾՆՄԱԲԵՐՍԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

